Դպրոցականներին՝ գազի անվտանգության կանոնների մասին

Բոլորիս հայտնի է, որ գազով աշխատող սարքերի հետ անզգույշ վարվելը կարող է ծանր հետեւանքներ ունենալ, որոնք կարող են դժբախտ դեպքերի պատճառ դառնալ: Քիչ չեն այն դեպքերը, երբ անվտանգության կանոնները չպահպանելու պատճառով տուժել են բազմաթիվ մարդիկ, երբեմն էլ՝ մահվան ելքով:

«Սպառողների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպությունը՝ կարեւորելով գազի անվտանգության կանոնները պահպանելու անհրաժեշտությունը եւ հետամուտ լինելով սպառողական հիմնախնդիրների լուծմանն այս ոլորտում, «Է3-Ի-Ջի Սերվիսի» հետ համատեղ, Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 հիմնական դպրոցում իրականացրեց իրազեկման դաս-ցերեկույթ, որի նպատակն էր նպաստել գազի անվտանգության տարրական գիտելիքների եւ կարողությունների ձեւավորմանը եւ իրական կյանքում դրանց կիրառմանը:

Բացման խոսքով ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Սուսաննա Սարգսյանը, որը նշեց, թե որքան կարեւոր են նման դասերը դպրոցական երեխաների համար, քանի որ չպահպանելով անվտանգության կանոնները, նրանք կարող են հայտնվել արտակարգ վիճակում, իսկ երբեմն էլ անդառնալի կորուստներ ունենալ, որովհետեւ գազը երբեք սխալներ չի ներում:

Դաս-ցերեկույթին մասնակցում էին նաեւ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Լիլյա Օհանյանը եւ մասնագիտական աշակցությունների գծով փոխտնօրեն Մարինե Չիբուխչյանը: Պարապունքը, որն անցկացրեցին «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ փոխնախագահ Կարեն Չիլինգարյանը, «Է3-Ի-Ջի Սերվիսի» Երեւանի ԳՀՏՍ ծառայության Շենգավիթ-Մալաթիա տեղամասի պետ Արտյոմ Սաֆարյանը, նույն տեղամասի փականագործներ Հովհաննես Փանոսյանը, Արամ Աբրահամյանը, անցավ շատ աշխույժ մթնոլորտում՝ հիմնականում հարց եւ պատասխանի միջոցով: Դպրոցի 6-րդ դասարանի աշակերտները գիտելիքների բավական լուրջ պաշար ունեին: Առավել այլի՝ ընկան աշակերտներ Մերի Դավթյանը, Արտակ Իսրայելյանը, Էրիկ Տոնոյանը, Լիլյա Քերոբյանը, Գեւորգ Ցավախյանը:

Դասի ժամանակ օգտագործվեցին պաստառներ, բուկլետներ եւ, ամենակարեւորը, խոհանոցային մանրակերտ՝ անհրաժեշտ սարքավորումներով, ինչպես նաեւ ցուցադրվեց մուլտֆիլմ, որի դիտման ընթացքում երեխաները, չկարողանալով զսպել իրենց հետաքրքրությունը՝ տեղից պատասխանում էին մուլտֆիլմի հերոսների մոտ առաջացած հարցերին եւ ուղղություն ցույց տալիս նրանց՝ առաջացած իրավիճակից գտնելու ճիշտ ելքը: Մուլտֆիլմի ավարտից հետո աշակերտներին բաժանվեցին հարցաթերթիկներ՝ պարզելու համար, թե որքանով են նրանք յուրացրել մատուցված նյութը:

Աշակերտները դասի ավարտին ցանկություն հայտնեցին ապագայում եւս մասնակցել նմանատիպ միջոցառումների: ՄՍ գծով փոխտնօրեն Մ. Չիբուխչյանը խոստացավ հետամուտ լինել, որպեսզի այդ թեմայով դասղեկի ժամն անցկացվի կիսամյակը մեկ անգամ՝ բոլոր դասարաններում եւ որ այդ թեմաները տեղ գտնեն դասղեկների աշխատանքային պլաններում: Դպրոցի տնօրեն Ս. Սարգսյանը խոստացավ, որ հաջորդ ուսումնական տարում «Է3-Ի-Ջի Սերվիսի» տրամադրած դասանյութերը համալրված կլինեն եւ տեսաֆիլմով, եւ դիտակտիկ նյութերով, եւ թեսթերով, որոնց լրացման արդյունքներից կախված, մյուս աշակերտները նույնպես կպարգեւատրվեն համապատասխան վկայագրերով:

Դպրոցում տեղակայված էլեկտրոնային գրատախտակը լայն հնարավորություն ընձեռեց ավելի հարմարավետ դարձնելու տարվող դասընթացը՝ միանգամից միանալով համացանցին, թույլ տալով դիտել թեմային վերաբերող տեսաֆիլմը:

Աշակերտներն ակտիվորեն պատասխանում էին տեսուչների կողմից տրվող հարցերին, ինչպես նաեւ մանրակերտի վրա կարողանում էին ճիշտ տեղադրել պայմանանշանը: Նրանք նկարագրեցին նաեւ, թե ինչպես են տանը օգտվում գազօջախից եւ ջրատաքացուցիչից:

Աշակերտները պարգեւատրվեցին շնորհակալական վկայագրերով, որով հաստատվում է, որ նրանց շնորհվում է տնային անվտանգության գործակալի կոչում՝ «Բնական գազից օգտվելու անվտանգության տեխնիկայի կանոնների իմացության, ցուցաբերած վճռականության եւ հնարամտության համար»: Վկայագրով պարգեւատվեց նաեւ ներառական ծրագրի շրջանակներում սովորող, հաշմանդամության խնդիր ունեցող աշակերտուհի Սոֆյա Եստոյանը, որին դա շատ ոգեւորեց: Պարգեւատրման պահը հուզեց Սոֆյայի մորը, որը ներկա էր ամբողջ դասընթացին: Նա իր շնորհակալական խոսքն ուղղեց դասընթացի կազմակերպիչներին:

Նման միջոցառումներ կազմակերպվեցին նաեւ մայրաքաղաքի այլ կրթօջախներում՝ Ն. Ստեփանյանի անվան թիվ 71 (տնօրեն՝ Գայանե Դեմիրյան), Ռ. Միրոյանի անվան թիվ 77 (տնօրեն՝ Նարա Պետրոսյան) եւ թիվ 171 (տնօրեն՝ Արամ Սաֆարյան) հիմնական դպրոցներում:

Արամ Հայրապետյան
«Է3-Ի-Ջի սերվիս» ընկերության
Հասարակայնության հետ
կապերի բաժին